«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն՝ «Երևանի հ. 109 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Թովմասյան Ռոմելա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....3
Գլուխ 1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ……..5
Գլուխ 2. Ինտեգրված պարապմունք……..…6
Հետազոտական մաս…… ...11
Եզրակացություն……...16
Գրականության ցանկ…….……..17

Ներածություն

Ավարտական հետազոտական աշխատանքի թեման է «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում»:

Նախադպրոցական տարիքի երեխան շրջապատող աշխարհն ընկալում է ամբողջությամբ: Բնականաբար, նախադպրոցական հաստատություններում կրթա-դաստիարակչական գործընթացի իրականացումն այսօր դաստիարակեց պահանջում է որոնել երեխաների ճանաչողական գործունեության կազմակերպման նոր ու արդյունավետ ձևեր և մեթոդներ: Ինտեգրված պարապմունքների արդյունքում ունենում ենք օբյեկտի (առարկա կամ երևույթ) բազմակողմանի քննություն, շրջակա աշխարհի իմաստալից ընկալում, գիտելիքների համապատասխան համակարգի ձևավորում, երևակայության խթանում, ստեղծագործական հետաքրքրությունների և դրական հուզական տրամադրության ապահովում:

Ավարտական հետազոտական աշխատանքի կարևորությունը պայմանավորված է հետևյալ գործոններով: Նախ պետական չափորոշիչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է: Ինտեգրված պարապմունքների միջոցով հնարավոր է դառնում ձևավորել կենսականորեն անհրաժեշտ զանազան կարողունակություններ (որոնք առավել մանրամասն նկարագրել ենք բուն տեքստի մեջ):

Աշխատանքի հիմնական նպատակներն են՝

- Ներկայացնել պետական չափորոշիչով նախատեսված կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի նախադպրոցականը: Ներկայացնել ինտեգրված պարապմունքը, դրա առանձնահատկությունները:
- Ներկայացնել ինտեգրված պարապմունքի կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման շրջանակներում:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

- Ներկայացնել թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա նյութերը:

- Ներկայացնել մեր կողմից իրականացված ինտեգրված դասը, վերլուծել և ներկայացնել արդյունքները:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը բաղկացած է 17 էջից:

Գլուխ 1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն
2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5) թվային և մեդիա կարողունակություն
6) մշակութային կարողունակություն
7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն
8) տնտեսական կարողունակություն

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:[1]

Գլուխ 2. Ինտեգրված պարապմունք

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկությունները փոքր հասակում, բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում: Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Մյուս կողմից՝ աշխարհը միասնական է և երեխան այն ընկալում է որպես ամբողջական միասնություն: Ուստի շրջապատող աշխարհին երեխային ծանոթացումը, հատկապես վաղ տարիքում, չի կարելի մասնատել այսպես կոչված «առարկաների» (մայրենի, մաթեմատիկա, բնագիտություն, երաժշտություն և այլն), դա կարող է աշխարհի մասին մասնատված պատկեր ստեղծել: Այս խնդրի լավագույն լուծումը ինտեգրված ուսուցումն է, երբ իրեն շրջապատող աշխարհի որևէ կոնկրետ երևույթ երեխան ուսումնասիրում է միաժամանակ մի քանի տեսանկյունից (ուսումնասիրում է, հասկանում, հաշվում այն, փորձում ու փորձարկում, նկարում, ծեփում, խոսում և երգում դրա մասին, խաղարկում դրա հետ կապված իրավիճակներ և այլն): Նշված նպատակին հասնելու արդյունավետ ուղիներից մեկը ուսումնառությունը ինտեգրված թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է[2]:

Թեմատիկ դասերը որևէ կոնկրետ թեմա, երևույթ ուսումնասիրելու ընթացքում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն,

---

[1] Նախադպրոցական Կրթության Պետական Կրթական Չափորոշիչը Հաստատելու Մասին Որոշում, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, 13 Մայիսի 2021 Թվականի N 744-Ն Https://Www.Arlis.Am/Documentview.Aspx?Docid=152575

[2] Ծառուկյան Ռ., Սմբատյան Լ., Մանուչարյան Ս., Գյուրջյան Ա., Մկրտչյան Մ., 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, Դաստիարակի ուղեցույց, Երևան 2018, 126:

անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով: Շատ կարևոր է նաև հոգատար, աջակցող միջավայր ստեղծելը, քանի որ միայն այսպիսի միջավայրում են մեծանում բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողություններ դրսևորող երեխաները: Թեմատիկ պարապմունքների ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, շահագրգռվածությունը երեխաների ուսման հարցում: Երեխաների սովորելու ընթացքում դաստիարակները և ծնողները զրուցում են նրանց հետ՝ ողջ ուշադրությունն ու էներգիան կենտրոնացնելով ուսման բովանդակության վրա: Աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար[3]: Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են:

• հոգատար են միմյանց նկատմամբ,
• հետաքրքիր կապեր են ստեղծում,
• կատարելագործում են շփման և երկխոսության հմտությունները,
• ձևավորվում են որպես համայնքի անդամներ:

Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում, ինտեգրում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավորներ ծրագրի տարբեր բաժիններից: Ինտեգրված թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմվում, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ: Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս մանկավարժին ծրագիրը կազմակերպել երեխաներին հետաքրքրող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ: Թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին ինքը՝ կյանքն է: Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է ներկայացվում մի

[3] Ծառուկյան Ռ., Սմբատյան Լ., Մանուչարյան Ս., Գյուրջյան Ա., Մկրտչյան Մ., նշվ. աշխ., էջ 127:

«իսկական» խնդիր կամ ուսումնասիրության ենթակա մի նոր գաղափար: Ուսումնասիրվող թեմայի կամ ծրագրի մեջ երեխայի հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ:

Թեմատիկ դասերի ծրագրման ժամանակ մանկավարժը պետք է հաշվի առնի հետևյալը.

• Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին:

• Ընտրված թեման նպաստո՞ւմ է երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանմանը:

• Հնարավո՞ր է ընտրած թեման անցնել այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցությունը, և միաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ:

• Երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու:

• Երեխաները հնարավորություն կունենա՞ն ավելացնելու իրենց գիտելիքները և փորձը առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ[4]:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքին ներկայացվում են հետևյալ պահանջները

- Թեմայի ընտրություն
- Ուսումնական նյութի մասին նախնական տեղեկատվության ձեռքբերում
- Ինտեգրվող բաղադրիչների ընտրություն /բնություն, գեղարվեստական գրականություն, երաժշտական ստեղծագործություններ, մշակութային կենցաղա- վարություն, շրջապատող իրականության երևույթներ և իրադարձություններ/
- Ուսուցման սկզբունքի ընտրություն
- Ինտեգրման մեթոդի ընտրություն
- Հստակություն, հետևողականություն

[4] Ծառուկյան Ռ., Սմբատյան Լ., Մանուչարյան Ս., Գյուրջյան Ա., Մկրտչյան Մ., նշվ. աշխ., էջ 128:

- Պարապմունքի յուրաքանչյուր փուլում ինտեգրվող առարկաների կանխատեսված և գիտակցված փոխադարձ կապի ապահովում:[5]

Հաշվի առնելով նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր գործունեության առանձնահատկությունները՝ պարապմունքի ժամանակ անհրաժեշտ է կիրառել մեծ քանակությամբ դիդակտիկ նյութեր և պարագաներ (նկարների ցուցահանդես, կենցաղային ապրանքներ, թեմայից բխող առարկաներ, մուլյաժներ և այն): Դրանք անհրաժեշտ է դասավորել այնպես, որ երեխաները կարողանան ազատ մոտենալ դրանց, ուսումնասիրել և օգտագործել: Ինտեգրված պարապմունքների կարևոր առանձնահատկություններից է նաև երեխաների շարժունության ապահովումը:

Ինտեգրված պարապմունքները երեխային թույլ են տալիս իրականացնելու իր ստեղծագործական բոլոր հնարավորությունները. նա մտածում է, տրամաբանում, երևակայում, հետազոտում: Հարստանում է բառապաշարը, զարգանում են հաղորդակական կարողությունները: Ինտեգրված պարապմունքի դրական կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ այն անց է կացվում խաղերի տեսքով՝ իր մեջ ներառելով մի շարք շարժողական գործուն իրավիճակներ՝ դինամիկ դադարներ, աշխուժացնող, թատերական խաղեր, թարմացնող վարժություններ:

Ինտեգրված պարապմունքը կառուցվում է մեկ ամբողջական գործունեության հենքով, որը միավորում է հսկայական տեղեկատվական դաշտ՝ փոխադարձ ներթափանցմամբ և ընդհանրացումներով: Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն ուսուցման բոլոր փուլերում: Սա նպաստում է համահավաք, կենտրոնացված ծրագրային նյութի յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ[6]:

Ինտեգրված պարապմունքները դաստիարակի և հոգեբանի, մանկավարժի, երաժշտական ղեկավարի, ֆիզկուլտուրայի հրահանգչի համատեղ աշխատանքի արդյունք են: Այսինքն՝ մանկավարժական գործընթացը, որը հիմնված է ինտեգրման սկզբունքների վրա, խթանում է բոլոր մասնագետների ամուր կապը: Ինտեգրված

[5] Սմբատյան Լ., Ինտեգրված պարապմունքները՝ նախադպրոցականի համակողմանի ուսուցման ապահովման երաշխիք, Նախաշավիղ, 1. 2015, էջ 39:
[6] Նշվ. աշխ., էջ 38:

պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին:

Մանկավարժության բնագավառի մի շարք տեսաբանների կարծիքով ինտեգրված ուսուցումը երեխաների մեջ խթանում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորումը: Ինտեգրված պարապմունքների միջոցով հնարավոր է դառնում ձևավորել կենսականորեն անհրաժեշտ զանազան հմտություններ, հաղորդակցական տպավորություններով կիսվելու կարողություն և մշակույթ:
Շրջապատող աշխարհն ինտեգրված պարապմունքների ժամանակ ընկալվում է իր բազմազանությամբ և միօրինակությամբ՝ ապահովելով երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև: Գործունեության տարբեր տեսակների շնորհիվ ինտեգրված պարամունքների ընթացքում վերանում են հոգնածությունն ու լարվածությունը[7]:

Ազատ ժամանակ է մնում լրացուցիչ պարապմունքների և խաղերի համար:

Ինտեգրված պարապմունքներն ինքնադրսևորման հնարավորություն են տալիս երեխաներին:

Պարբերաբար անցկացվող ինտեգրված պարապունքներն առավելապես նպաստում են երեխայի խոսքի զարգացմանը: Նրա մեջ ձևավորվում են համեմատելու, ընդհանրացնելու, եզրակացնելու կարողություններ: Վերանում են լարվածությունը, ընդլայնվում է մտահորիզոնը:

[7] Սմբատյան Լ., Ինտեգրված պարապմունքները՝ նախադպրոցականի համակողմանի ուսուցման ապահովման երաշխիք, էջ 42:

ԳԼՈՒԽ 3. Հետազոտական մաս

Ինտեգրված պարապմունք «Ձմեռ» թեմայով

Ինտեգրված պարապմունքի նպատակն է խթանել երեխաների լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիվացիոն, մշակութային, մաթեմատիկական կարողունակությունները:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ համակարգիչ, նկարներ, ձմեռային բնապատկեր, նկարներ, գունավոր թղթեր, մկրատ, տոնածառի խաղալիքներ:

Համակարգչով միացնում ենք տեսանյութ, տեսանյութում ձմեռային դրվագներ են, ձյուն է գալիս, երեխաները ձնագնդի, ձնեմարդ են պատրաստում, տոնածառն են զարդարում:

Դաստիարակ

Ի՞նչ տեսակ տեսահոլովակում:

Երեխա

Ձյուն էր գալիս: Տոնածառն էին զարդարում:

Դաստիարակ

-Երեխաներ ե՞րբ է ձյուն գալիս:

Երեխա

-Ձմռանը:

Դաստիարակ

Ե՞րբ են տոնածառը զարդարում:

Երեխա

Ձմռանը, Ամանորից առաջ:

Դաստիարակ

Ի՞նչ գիտեք ձմռան մասին, ի՞նչ գույնով կնկարագրեք ձմեռը:

Երեխա

Ձմռանը օրերը ցրտում են:

Ձմռանը պետք է ավելի տաք հագնվենք:

Ձմռանը մենք տոնում ենք Ամանորը:

Ձմռանը մեզ հյուր է գալիս Ձմեռ պապը:

Ձմռանը ձյուն է գալիս:

Ձմռանը հասնում է մանդարինը:

Ձմռանը թռչունները չվում են տաք երկրներ:

Ձմռանը ծառերը մերկանում են:

Ձմեռը սպիտակ գույն ունի, դա ձյան գույն է:

Դաստիարակ

Ի՞նչ տոներ ենք նշում ձմռանը:

Երեխա

Ամանորը:

Սուրբ Ծնունդը:

Բանակի օրը:

Դաստիարակ

Երեխաներ, իսկ գիտե՞ք որոնք են ձմռան ամիսները:

Երեխա

Դեկտեմբեր, հունվար, փետրվար:

Դաստիարակ

Ո՞ր եղանակին է հաջորդում ձմեռը:

Երեխա

Աշուն:

Դաստիարակ

Իսկ որ եղանակն է հաջորդում ձմռանը:

Գարուն:

Դաստիարակ

Այժմ խաղ կխաղանք: Պատին նախորոք փակցնում ենք նկարներ, որոնք արվել են տարվա տարբեր եղանակների և երեխաները հերթով պետք է ասեն, թե որ նկարը տարվա որ եղանակին է նկարվել: Ապա հաշվում ենք, թե տարվա որ եղանակը պատկերող քանի նկար կա:

Ապա կատարում ենք կոլեկտիվ աշխատանք՝ ապլիկացիա «Ցրտաշունչ ձմեռ» թեմայով:

Երեխաներին սովորեցնում ենք գունավոր թղթերից պատրաստել տոնածառ, ձնեմարդ, ձյան փաթիլներ, տոնածառի խաղալիքներ:

Ապա երեխաների հետ նամակ ենք գրում ձմեռ պապիկին, խնդրում, որ մեզ համար բերի նվերներ:

Միասին տեղադրում ենք տոնածառը և զարդարում:

Եզրակացություն

Ինտեգրված պարապմունքները երեխային թույլ են տալիս իրականացնելու իր ստեղծագործական բոլոր հնարավորությունները. նա մտածում է, տրամաբանում, երևակայում, հետազոտում: Հարստանում է բառապաշարը, զարգանում են հաղորդակական կարողությունները: Ինտեգրված պարապմունքի դրական կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ այն անց է կացվում խաղերի տեսքով՝ իր մեջ ներառելով մի շարք շարժողական գործուն իրավիճակներ՝ դինամիկ դադարներ, աշխուժացնող, թատերական խաղեր, թարմացնող վարժություններ:

Հետազոտության արդյունքում, իրականացնելով ինտեգրված պարապմունք, մենք հասանք հետևյալ արդյունքներին:

Երեխաները ազատ հաղորդակցվում են, ինքնուրույն ձևակերպում են սեփական մտքերը, արտահայտում են իրենց վերաբերմունքը:

Երեխաները դրսևորում են ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների հանդեպ:

Շփման մեջ է մտնում, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ: Ճանաչում է իր մոլորակը, մեր երկիրը, տոները,

Երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը:

Երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում հետազոտում է առարկաները:

Գրականության Ցանկ

1. Նախադպրոցական Կրթության Պետական Կրթական Չափորոշիչը Հաստատելու Մասին Որոշում, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, 13 Մայիսի 2021 Թվականի N 744-Ն Https://Www.Arlis.Am/Documentview.Aspx?Docid=152575
2. Ծառուկյան Ռ., Սմբատյան Լ., Մանուչարյան Ս., Գյուրջյան Ա., Մկրտչյան Մ., 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2018:
3. Սմբատյան Լ., Ինտեգրված պարապմունքները՝ նախադպրոցականի համակողմանի ուսուցման ապահովման երաշխիք, Նախաշավիղ, 1. 2015, էջ 37-44: